

INTESOL accredited 140 hour Certificate in TEFL with Online Teaching Practice

Դասընթացի նկարագրություն

INTESOL-ի 140 դասաժամ ներառող անգլերեն որպես օտար լեզու դասավանդման դասընթացը, որը իրականացվում է առցանց տարբերակով, լավագույն ընտրությունն է, եթե ցանկանում եք ձեռք բերել միջազգայնորեն ընդունված TEFL-ի դասընթացներ և ստանալ դասավանդման ոլորտում օգտակար փորձ նախքան դասավանդման առաջին աշխատանքին անցնելը: Դուք կարող եք բնակվել աշխարհի ցանկացած վայրում, քանի որ մենք TEFL-ի այնպիսի դասընթացներ ենք իրականացնում, որոնք հնարավորություն են տալիս ձեզ դասավանդելու աշխարհի յուրաքանչյուր կետից՝ առցանց տարբերակով: Եվ այս ամենը բավականին հարմար գներով: Երբ սկսեք արտերկրում անգլերեն սովորեցնել հիմնականում բոլոր դասերը կանցկացվեն պատանիների հետ: TEFL-ի դասընթացը ներառում է՝ պատանիներին անգլերեն սովորեցնելու մի ամբողջական ծրագիր, ուստի կսովորեք այնպիսի անհրաժեշտ հմտություններ, որոնք TEFL սովորեցնելու համար պահանջված են ամբողջ աշխարհում: Դուք կսովորեք, թե ինչպես զվարճալի դասեր անցկացնել և դասերը հետաքրքիր դարձնել ոչ միայն ձեզ այլև բոլոր մասնակիցների համար՝ վստահեցնելով, որ ունեք համապատասխան փորձ:

Ցանկանում եք ճանաչել աշխարհը, ապա սա ձեր անցագիրն է՝ աշխարհի ցանկացած վայրում դասապատրաստողի աշխատանք գտնելու համար:

Ինչու՞ ընտրել հենց այս TEFL-ի դասընթացը

- Դուք կարող եք մասնակցել դասերին առցանց ձեր համակարգչով, բջջային հեռախոսով որտեղ և երբ ցանկանաք: Չկա մեկնարկային կամ ժամային սահմանափակում: Դուք ազատ եք կազմակերպելու ձեր դասերը այնպես ինչպես դուք կցանկանաք: Դասերը կարող եք անցկացնել անգամ ծովափում:

- 140 դասաժամ ներառող դասընթացը պարունակում է մոդուլներ: Այս հավելյալ տեղեկատվությունը ոչ միայն օգտակար կլինի ձեզ, երբ սկսեք սովորեցնել, այլև հնարավորություն կտա ձեզ ցույց տալու ձեր բերված հմտությունները, որոնք անհրաժեշտ են TEFL-ի անձնակազմի համար: Մենք վստահեցնում ենք ձեզ, որ ձեր բերված գիտելիքներով դուք կտարբերվեք բոլորից:
- Դասընթացի և պրակտիկայի ընթացքում INTESOL-ի առցանց դասերի շնորհիվ կսովորեք դասավանդման հետաքրքիր հմտություններ:
- INTESOL-ն արդեն 26 տարի է՝ TEFL-ի համար պատրաստում է ուսուցիչներ, ինչի շնորհիվ էլ TEFL-ի ոլորտում զբաղեցնում է իր արժանի տեղը: Սա նշանակում է, որ TEFL-ի հավաստագիրը միանգամից կընդունվի իր բարձր որակի շնորհիվ:
- 140 դասաժամ ներառող TEFL-ի կուրսը պաշտոնապես ընդունված է արտաքին աշխարհի կոմից այսինքն՝ սովորեցնելու մեթոդները մանրամասնորեն ուսումնասիրվել են՝ համապատասխանելու ոլորտի չափանիշներին: Դուք կարող եք վստահ լինել, որ կունենաք արդյունավետ և օգտակար ուսման փորձ:
- Ձեր դասապատրաստողը կլինի փորձառու և կունենա առնվազն TESOL-ի դիպլոմ (քանի որ շատերը ունեն TESOL-ի մագիստրոսի կոչում): Նրանց օգնությամբ դուք ձեր կրթեք անհրաժեշտ գիտելիքներ:
- INTESOL-ը ամբողջ աշխարհի մասնաճյուղերի հետ ունի ամուր ցանցային կապեր ներառյալ՝ Ճապոնիայի, Իրանի, Հնդկաստանի և Ռուսաստանի հետ: Ինչպես նաև, INTESOL-ը զարգացրել է բազմազան հարաբերություններ EFL-ի դպրոցների և TEFL-ի թե՛ աշխատակետերում հավաքագրողների հետ: Մենք պատրաստ ենք օգնելու ձեզ գտնել ամենալավ աշխատատեղը:

Հավատարմագրություն/ Պաշտոնական ճանաչում

TEFL-ի 140 դասաժամ ներառող դասընթացը՝ առցանց տարբերակով պատանիների դասավանդում և պրակտիկա, Մեծ Բրիտանիայում կրթական որակավորում շնորհող առաջատար կազմակերպության՝ Awarding Language Acquisition for Professionals-ի

կողմից հավատարմագրված է: ALAP-ին հավաստագիր շնորհող կազմակերպություն է, որը մասնագիտացված է ELT ոլորտում: ALAP-ին աջակցում է Academic Panel-ը (գիտական հանձնաժողով): Հանձնաժողովում ներգրավված են Անգլերենի դասավանդման հմուտ մասնագետներ: ALAP-ի հանձնաժողովը զբաղվում է այնպիսի հարցերով ինչպիսին է՝ ուսումնական որակ, վտահեցնելով որ ALAP-ի կողմից շնորհվող հավաստագիրը ունի բարձր արժեք:

TEFL դասընթացի նպատակները

TEFL-ի 140 դասաժամ ներառող դասընթացի հիմնական նպատակն է TEFL-ի և TESOL-ի մասին տրամադրել խելամիտ և օգտակար տեղեկատվություն և պատրաստել ձեզ իրական աշխարհում դասավանդելու համար:

Ընտրման կարգ

Նախնական որակավորում կամ փորձ չի պահանջվում: Անհրաժեշտ պահանջներն են՝ սահուն անգլերեն, վճռականություն և ցանկություն:

TEFL Դասընթացի կառուցվածքը

TEFL առցանց դասընթացին գրանցվելուց հետո քսանչորս ժամվա ընթացքում դուք կստանաք ձեր մուտքային տվյալները INTESOL առցանց ուսումնարանում: Դասընթացը բաղկացած է հինգ դասից (ընդհանուր տասնմեկ մոդուլ): Յուրաքանչյուր մոդուլ բաղկացած է դասից, որը դուք կսովորեք ձեզ հարմար ժամանակում և առաջադրանքից, որը դուք կկատարեք և կգնահատվեք ձեր ուսուցչի կողմից: Առաջադրանքների գնահատումից հետո էլ. փոստով կստանաք հաղորդագրություն և կիմանաք ձեր գնահատականը ներառյալ՝ խորհուրդներ ձեր դասապատրաստողից: Մոդուլը ձախողելու դեպքում մի անհանգստացեք, ձեզ հնարավորություն կտրվի կրկին կատարելու առաջադրանքը լրացուցիչ պարապմունքներից հետո: Վերջնական քննություններ չկան: Վերջին հանձնարարությունը գնահատելուց հետո հնարավորություն կտրվի տեսնել ձեր վերջնական գնահատականը: Վերջնական

գնահատականը հաշվարկվում է վերցնելով տաս դասի ընթացում ստացված միջին գնահատականները: Վերջնական գնահատականը կնշվի ձեռք հավաստագրում:

Առցանց Դասավանդման Պրակտիկա

Դասընթացը մատչելի է, խնայում է ձեռք ժամանակը և հասանելի ամեն վայրում: Անհրաժեշտ է միայն համակարգիչ, վեբկամերա, ականջակալներ, և արագ ինտերնետ կապ: (ներքևում տե՛ս տեխնիկական պահանջներ): Ձեզ կտրվեն դասեր, որոնց պետք է պատրաստվեք: Դասերի պլանները և նյութերը կուղարկվեն այն դպրոցի ուսումնական մասի ղեկավարին, որտեղ դուք դասավանդելու եք: Ձեզանից կպահանջեն սահմանել ամսաթվեր, և դասերը կհարմարեցվեն ձեզ և տվյալ դպրոցի համար համապատասխան ժամերին: Ձեզ հնարավորություն կտրվի ամեն անգամ դասերը տարբեր օրեր անցկացնել: Նաև հնարավորություն կունենաք սկզբում դասավանդել մեկ խմբի, որից հետո դասի անցկացման փորձ ձեռք կբերեք: Ձեզնից ակնկալվում է պլանավորել 6 դասաժամ յուրաքանչյուրը 40 րոպե տևողությամբ: 3-ը տարրական մակարդակի և մնացած երեքը զանազան մակարդակների համար: Ձեզ կուղարկվեն դասերի կազմակերպման մանրամասները:

INTESOL-ի Առցանց դասավանդման պրակտիկան լիովին ճկուն, հարմարավետ մեթոդ է ստանալու TEFL-ի որակավորում՝ ամբողջովին առցանց տարբերակով:

Ինչ անհրաժեշտ կլինի առցանց դասավանդման պրակտիկայի համար

- Ինտերնետ կապ, վեբկամերա, ականջակալներ
- Ինտերնետի նվազագույն արագություն, Վերբեռնելու՝ 10Mbps+/, Ներբեռնելու՝ 25Mbps+

Դասընթացի բովանդակություն

Դաս 1: Հմտությունների ուսումնասիրություն

(չի գնահատվում) ինչպես լավագույնս կազմակերպել դասապրոցեսը

Մոդուլին նախորդող քերականություն- Ինքնուրույն առաջադրանքներ պատրաստի պատասխաններով՝ Դաս 2-ի համար (Անգլերենի ուսումնասիրում)

Դաս 2: Անգլերենի ուսումնասիրում

Մոդուլ 1: Քերականություն- առաջադրանքներ քերականության ընկալման համար, ժամանակաձև և կառուցվածք: to be (լինել) բայի բոլոր ժամանակների ուսուցում քերականության դասագրքի միջոցով:

Մոդուլ 2: Հնչյունաբանություն- հնչյունային այբուբեն, շեշտ և առոգանություն:

Մոդուլ 3: Բառագիտություն- բառապաշարի ներկայացման համար անհրաժեշտ առաջադրանքներ, բաղադրյալ բառեր, բառարմատներ, լեզվի համապատասխանություն և պատշաճություն:

Դաս 3: TESOL-ի դասավանդում և ուսուցում

Մոդուլ 1: Հիմնական սկզբունքներ- պատասխաններ հիմնված ձեր սեփական փորձի և դասընթացի նութերի վրա՝

- Սովորելուն խոչընդոտող արգելքներ
- Մոտիվացիա
- Հաղորդակցման կարողություն

Մոդուլ 2: Ընթերցանություն և Ունկընդրում- առաջադրանքներ, որոնք հիմնված են բնօրինակ նյութերի շահագործման վրա, այսինքն՝ ամսագրեր, թերթեր, ռադիոհաղորդումներ և այլն:

Մոդուլ 3: Բանավոր և Գրավոր խոսք- առաջադրանքներ վերը նշված ուղղվածությամբ, սակայն ավելի գործնական հակումով- աշակերտներին պատրաստել լեզվով խոսելուն:

Մոդուլ 4: Տեսողական միջոցներ- հասանելի աուդիո-վիզուալ միջոցների ուսումնասիրություն: Սեփական հիշաքարտերի և այլ օգտակար միջոցների ստեղծում խավավոր գործվածքի միջոցով:

Մոդուլ 5: Սխալներ- պարզել սովորողների հիմնական սխալները, դասակարգել դրանք, սխալների ուղղման ծածկագրի կիրառություն, սխալների ուղղման և բարելավման համար վարժությունների մշակում:

Դաս 4: Դասաժամի կազմակերպում և անցկացում

Մոդուլ 1: Դասապրոցեսի կազմակերպում- աշակերտ-ուսուցիչ հարաբերություններին առնչվող առաջադրանքներ: Ինչպես դասի ժամանակ և դասից դուրս հաստատել արդյունավետ և անկեղծ շփում:

Մոդուլ 2: Դասի փուլերը և պլանները- գործի մեջ դնել վերը նշված կետերը: Ժամանակի կարգավորում, նախավարժանքներ, ներանցում: Դասերի փորձի և իրականացման փուլերի մասին տեղեկատվություն:

Հավելյալ Դաս: Պատանի աշակերտների (ենթակա չէ գնահատման)

Դասում ներառված թեմաները՝

- Մեծերի և երեխաների սովորելու մեթոդների տարբերությունները
- Փուլային առանձնահատկություններ պատանիների զարգացման ընթացքում
- Պատանի աշակերտների դասապրոցեսի կազմակերպման ժամանակ դասապրոցեսի կառավարման ռազմավարությունների կիրառություն:
- Պատանի աշակերտների համար կիրառվող ուսուցման մեթոդներ:

Դաս 6: Դասավանդման փորձ

Հետազոտական խորհրդակցություն:

Դաս 7: Դասավանդման փորձ

Դասապրոցեսի կազմակերպում

դիտարկված, գնահատված դասավանդման և հետադարձ կապի խորհրդակցություններ

Հավաստագրի շնորհում

Հավաստագրերը գնահատվում են հետևյալ կերպ.

A1 - տարբերակում

A2 - գերազանց

B1 - շատ լավ

B2 - լավ

C- անցողիկ շեմի հաղթահարում

TEFL դասընթացի տևողությունը

TEFL դասընթացի ավարտումը կախված է ձեր հավելյալ պարտավորություններից: Դասընթացը ներառում է ուսուցման 140 ժամ: Հիմնականում, շատ մասնակիցներ ավարտում են դասընթացը 8 շաբաթում: Այնուամենայնիվ, եթե ձեզ անհրաժեշտ է ավել ժամանակ, ապա խնդիր չէ:

Ի՞նչ է ներառված TEFL դասընթացի շրջանակներում:

- TEFL- ի հավաստագիր, որակավորում շնորհող կազմակերպության կողմից
- Դասընթացի արձանագրությունը՝ միևնույն կազմակերպության կողմից
- Հետդարձ դեպի խորքային քերականություն
- Անձնական դասապատրաստողի աջակցություն
- Երաշխավորված մեթոդներ, որոնց շնորհիվ դուք վստահորեն կդասավանդեք
- Միջազգայնորեն ճանաչված որակավորում ձեռք բերելու երաշխիք
- Աշխատանքի ուղղորդում և աջակցություն

Ոչ մի հավելավճար՝ հավելյալ ժամանակի անհրաժեշտության դեպքում: Վերցնում եք այնքան ժամանակ, որքան ձեզ հարկավոր է:

* Խնդրում ենք նկատի ունենալ- Չկա մեկնարկային կամ ժամանակի սահմանափակում: Դուք եք որոշում՝ երբ սկսել պարապմունքները: Դասընթացին մասնակցելու համար ձեզ կտրամադրեն անձնական մուտքային տվյալներ: